«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ձևավորող գնահատումը «Մայրենի» առարկայի դասերին, գնահատման գործիքներ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Ծաքե Սարգսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ստ. Ծահումյանի անվան թիվ 1 հ/դ

Բովանդակություն

Ներածություն *3*

Գլուխ 1 Ձևավորող գնահատումը «Մայրենի» առարկայի դասերին, գնահատման գործիքներ *5*

1.1 Ինքնագնահատում 5

1.2 Փոխադարձ գնահատում 7

1.3 Բանավոր հարցման գնահատում 8

1.4 Գրավոր աշխատանք 12

1.5 Հետադարձ կապ 13

Հավելված 1 ..... *16*

Հավելված 2 ..... *18*

Եզրակացություն *21*

Ներածություն

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակ է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձևավորող գնահատումն ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում (Գծակարգ):

Ուսման հանդեպ մոտիվացիայի բարձրացման նպատակով ապահովում սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

- Սովորողների կողմից ինքնագնահատման ունակության ձևավորում:
- Սովորողների կողմից փոխադարձ գնահատման ունակության ձևավորում:
- Արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման ձևերն ու հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի ձևերով և հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր տեսակների ու ձևերի հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ ուսուցչի և՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

- Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.
- Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

- սովորողի գործուն ընդգրկվածությունը ենթադրում է.
- ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,
- սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ձևավորող գնահատման ձևերը

- Գրավոր կարճ հարցում (թեստ)
- Բանավոր հարցում
- Գրավոր աշխատանք
- Գործնական աշխատանք
- Տնային աշխատանք
- Նախագծային աշխատանք
- Քննարկում, բանավեճ
- Այլ

Հետազոտական աշխատանքի նպատակներն են.

- Ձևավորող գնահաման միջոցով կարող ենք բացահայտել սովորողի ձեռքբերումները
- Շտկել և ճշգրտել բացթողումները, գտնել և վերհանել սովորողի կարիքները
- Ուսումնական խնդիրների համատեղ լուծում գտնել՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- Նպաստել սովորողների ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը՝ կիրառելով համապատասխան հնարներ և միջոցներ:
- Նեկայացնել դրանց կիրառումը մայրենիի դասավանդման ընթացքում՝ հաշվի առնելով սովորողների առանձնահատկությունները
- Բացահայատել դրանց արդյունավետությունը սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական ունակությունները զարգացնելու գործում

Համոզված ենք, որ այս ամենը կնպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Գլուխ 1 Ձևավորող գնահատումը «Մայրենի» առարկայի դասերին, գնահատման գործիքներ

Ինչպես գիտենք, ձեւավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների եւ սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի եւ սովորողների առջեւ դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:
Ձեւավորող գնահատում իրականացնելիս անհրաժեշտ է վերհանել սովորողների կարիքները.

- Յուրացրե՞լ են թեման, թե՞ ոչ:
- Կարելի՞ է արդյոք անցնել մյուս բաժինն ուսումնասիրելուն:
- Ո՞վ ունի լրացուցիչ օգնության կարիք:

Ի՞նչը պետք է փոխել կամ վերանայել դասի պլանավորման եւ դասավանդման մեթոդիկայում:

Ձեւավորող գնահատման գործիքները բազմազան են, եւ ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է կիրառել նպատակային եւ հետեւողականորեն: Կարելի է սկսել ձեւավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներից:

Մեր դասերին ձևավորող գնահատում կիրառելիս օգտագործում ենք գնահատման այնպիսի ձևեր ինչպիսիք են.

- 1.1 Ինքնագնահատում
- 1.2 Փոխադարձ գնահատում
- 1.3 Բանավոր հարցման գնահատում

1.4 Գրավոր աշխատանք

- 1.5 Հետադարձ կապ

Ուսումնասիրենք ձևավորող գնահատման գործիքները առանձին-առանձին:

1.1 Ինքնագնահատում

Ինքնագնահատման գործիքը կարելի է կիրառել տարբեր տեքստերի շուրջ աշխատելիս:

Ինքնագնահատման գործիքը կազմված է 2 մասից. 1-ին մասի աղյուսակի շուրջ աշխատելուց՝ հմտությունների դիմաց համապատասխան նշումներ կատարելուց հետո սովորողը 2-րդ հատվածում լրացնում կամ ընդգծում է՝ ինչ քայլեր պետք է իրականացնի արդյունքների բարելավման համար:
Ինքնագնահատման գործիքը սովորողի համար ակնառու է դարձնում իր ուժեղ և թույլ կողմերը, այն հմտությունները, որոնք պետք է բարելավի ու զարգացնի ուսումնառության ընթացքում:
Սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ուսուցիչը կարող է պարզեցնել աղյուսակում տրվող հմտությունները:

Ինքնագնահատման գործիք

Սիրելի՛ սովորող, գնահատի՛ր քո հմտությունները՝ հետևելով քայլաշարին:

- Ծանոթացի՛ր աղյուսակում գրված բոլոր հմտություններին:
- Ծանոթացի՛ր առաջարկվող պայմանական նշաններին:

Յուրաքանչյուր հմտության վանդակում նշում կատարի՛ր՝ ընտրելով համապատասխան նշանը:

+ **Կ**արող եմ
V Լավ չեմ կարող
? Վստահ չեմ, որ կարող եմ
- Չեմ կարող

1. Հորինել և ներկայացնել փոքրիկ պատմություն նկարի շուրջ:
2. Բանալի բառերի միջոցով կանխագուշակել տեքստի բովանդակությունը և բանավոր կարծիք արտահայտել:
3. Կարդալ տեքստը բարձրաձայն՝ տեքստի տարբեր հատվածների համար ընտրելով համապատասխան հնչերանգ և դիմախաղ:
4. Հատվածաբար բարձրաձայն ընթերցել տեքստը՝ զուգահեռ բացատրելով բառերը և վերնագրելով հատվածները:
5. Մասնակցել տեքստի բովանդակության քննարկմանը՝ պատասխանելով հարցերին:
6. Բնութագրել տեքստի հերոսներին՝ հիմնավորելով պատմվածքի համապատասխան տողերը:
7. Ստեղծել երկխոսություն հերոսների միջև՝ խոսքում կիրառելով կոչականներ:
8. Համեմատել տարբեր ստեղծագործությունների հերոսներին ու նրանց գործողությունները:
9. Մասնակցել հարցազրույցին՝ քննարկելով տեքստի հիմնական հարցերն ու գաղափարները, մեկնաբանելով բազմիմաստ բառերն ու արտահայտությունները:
10. Որևէ հերոսի անունից վերարտադրել տեքստը:

Եթե աղյուսակում բացի «+» նշանից ունես այլ նշաններ, կարող ես մտածել արդյունքները բարելավելու մասին: Քեզ կօգնեն համապատասխան հարցերը: Հարցերը քեզ կհուշեն՝ ինչ օգնության կարիք ունես, ում կարող ես դիմել, ինչպես կարող ես զարգացնել քո հմտությունները:

1.2 Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատումը ձևավորող գնահատման գործիքներից է և կարող է իրականացվել հետևյալ տարբերակներով.

- սովորողը՝ սովորողին,
- խումբը՝ խմբին,
- սովորողը՝ խմբին,
- խումբը՝ սովորողին:

Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկանում են իրենց աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողում ները լրացնելու համար:

Կարևոր է, որ ուսուցչի կամ դասընկերոջ կողմից ապահովվի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ. դա կօգնի սովորողին գնահատել իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնահատելիս լինի օբյեկտիվ և պարզի հետևյալ հարցերը.



Փոխադարձ գնահատումը այլ միջոցների հետ մեկտեղ նպաստում է կրթության որակի բարելավմանը և պահանջում է անձնական պատասխանատվություն, անդրադարձ սեփական ուսումնառությանը, կատարած դիտարկումների հիմնավորվածություն և արդյունքում՝ ինքնագնահատում:

Փոխադարձ գնահատում իրականացնելիս պետք է ապահովվի համապատասխան միջավայր, իսկ սովորողների մեջ ձևավորի համապատասխան որակներ և վերաբերմունք: Փոխադարձ գնահատում կարելի է իրականացնել քարտային աշխատանքով, առանձին առաջադրանքներով, ստուգաթերթերով և այլն:

Փոխադարձ գնահատման համար անհրաժեշտ միջավայր և որակներ



Փոխադարձ գնահատում կազմակերպելուց առաջ ուսուցիչը պետք է ընտրի առաջադրանքը և տրամադրի այդ առաջադրանքի գնահատման սանդղակը՝ չափանիշներով: Շատ ավելի նպատակահարմար կլինի, եթե չափանիշները մշակվեն սովորողների հետ միասին:

Փոխադարձ գնահատման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ քայլաշարով

1.3 Բանավոր հարցման գնահատում

Առանձնացրել ենք բանավոր խոսքին ներկայացվող 3 հիմնական պահանջներ՝ ***բովանդակության***, **կառուցվածքին** եւ ***արտահայտման*** (ներկայացման) ***ձևին:*** Սովորողի բանավոր պատասխանին զուգահեռ հնարավոր է ընտրել, թե որ չափանիշը սովորողը ինչ մակարդակով է ապահովում: Դիտարկումների եւ կատարած նշումների հիման վրա պլանավորվում է արդյունքների բարելավմանն ուղղված հետագա աշխատանքը: Հավելված 1-ում կներկայացնենք բանավոր հարցման գնահատման սանդղակը:
Բանավոր հարցման գնահատում իրականացնելիս կիրառվում են ուսուցման տարբեր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնցից կարելի է նշել ուղղորդված և ընտրովի ընթերցանությունը, զույգերով կամ անհատական ընթերցանությունը, <<Կանխազուշակման աղյուսակ>>, <<Պատմության քարտեզ>> մեթոդները՝ նկատի ունենալով նյութի ծավալը:
Ստորև ներկայացնենք **<<Հացը>> պատմվածքի** ուսուցման կազմակերպման մեր օրինակը: Թեման ուսուցանելիս՝ տարբեր դասաժամերի ընթացքում, կիրառել ենք ընթերցանության տարբեր մեթոդներ՝ աշակերտների մեջ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու, նյութը վերլուծելու և քննելու համար: Այս ընթացքում խրախուսել ենք պատմվածքի ինքնուրույն ընթերցանությունը՝ ապահովելով սովորողի և հեղինակի միջև յուրատեսակ զրույց՝ իր կարդացածից հաճույք զգալու համար, իսկ հետո այդ զրույցը տեղափոխվել է դասարան և սովորողները մտքեր են փոխանակել կարդացածի մասին, արել վերլուծություններ ու դատողություններ: Դասարանում կիրառվել են **ուղղորդված և ընտրովի ընթերցանություն մեթոդները,** քանի որ Մաթևոսյանի երկերի ընթերցման ժամանակ կարևոր է ուսուցչի դերը նյութի դյուրին ընկալման համար: Այս ընթացքում աշակերտները ակտիվություն են ցուցաբերել պատմվածքը վերլուծելիս և հերոսներին բնութագրելիս:

Հրանտ Մաթևոսյանի երկերը մեկ ընթերցանությամբ չընկալվող գրական այն բարդ երևույթներից են, որոնք ուշադրության կենտրոնացում և մտքի լարում են պահանջում: Նրա երկերը կարդալու համար ընթերցողին անհրաժեշտ են մի քանի

վերընթերցման ժամանակ են հայտնաբերվում միջադեպային մանրամասները, խաղացկուն բնապատկերները… (Ղարագյոզյան Ա., 2008, էջ 79):
Պատմվածքի ուսուցման ընթացքում կիրառվել է նաև **<<Քառաբաժան>>** մեթոդը:

1. Ի՞նչ պատկերներ էի տեքստում պատմվածքն ընթերցելիս:	2. Ի՞նչ էի մտածում:
3. Կապը իրական կյանքին. Բերել օրինակներ:	4. Նոր վերնագիր:

Յուրաքանչյուր աշակերտ իր տետրում ունեցել է քառաբաժանի պատկերը. առաջարկել ենք լրացնել այդ աղյուսակը ինքնուրույնաբար: Աղյուսակը լրացնելուց հետո աշակերտները ընթերցել են գրածները, փորձել մեկնաբանել ու բացատրել, թե ինչպիսի գյուղական պատկերներ էին տեսնում պատմվածքը կարդալիս, ինչ էին մտածում տղայի մասին: Պատմվածքի համար յուրաքանչյուր խումբ ընտրել է նոր վերնագիր, և կազմակերպվել է հետաքրքիր քննարկում:

Քանի որ դասարանում կային տարբեր նախասիրություններ և ունակություններ ունեցող երեխաներ, հանձնարարությունները տրվել են այնպես, որ յուրաքանչյուր սովորող ունենա ինքնուրույնության և նախաձեռնության հնարավորություն, յուրովի ցուցաբերի իր ունակությունները: Ուշադրություն է դարձվել և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքի զարգացմանը:

Աշակերտներին հանձնարարվել էր նաև գրել շարադրություն, որը նպաստեց սովորողների ստեղծագործական ունակությունների դրսևորմանը:

Դասարանը՝ 6-րդ
Առարկան՝ Մայրենի
Դասի տիպը՝ կրկնման-ընդհանրացման դաս
Թեման՝ Հրանտ Մաթևոսյանի <<Հացը>> պատմվածքը, հականիշ բառեր
Նպատակները՝
ա/ակադեմիական՝

- իմանալ <<Հացը>> պատմվածքի բովանդակությունը,
- բնագրից գտնել գլխավոր հերոսին նկարագրող բառեր կամ նախադասություններ,
- սեփական բառերով բնութագրել պատմվածքի հերոսներին,
- տարբերակել հականիշների ձևաիմաստային առանձնահատկությունները՝ ամրապնդելով բառի տեսակների վերաբերյալ նախորդ դասերին ձեռք բերած գիտելիքները,
- գաղափար ունենալ պատմվածքի ժանրային առանձնահատկությունների մասին,

բ/ սոցիալական՝

- ձևավորել սովորողների՝ միմյանց լսելու, օգնելու և համագործակցելու կարողություններ,
- զարգացնել սովորողների՝ ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու ունակությունները,

գ/ արժեքային համակարգ՝

- գիտակցել ինքնաճանաչման, դիմացինին հասկանալու, մարդկանց ձեռք մեկնելու, ծնողների և իրենց շրջապատող մարդկանց նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,
- արժևորել աշխատասիրությունը, ծնողասիրությունը,
- կարևորել սեփական սխալների գիտակցումը, ինքնախոստովանությունը և զղջումը՝ որպես սխալների ուղղման հնարավորություն:

Վերջնարդյունք՝

- կվերարտադրի պատմվածքի բովանդակությունը,
- կվերլուծի տղայի վարքագիծը՝ մատնանշելով նրա դրական և բացասական հատկանիշները բառերի կամ բառակապակցությունների միջոցով,
- կկատարի բառային աշխատանք հոմանիշների, հականիշների և բազմիմաստ բառերի շուրջ,
- կստեղծվի միջառարկայական կապ:

Մեթոդները՝ հարցուպատասխանի մեթոդ, ընտրովի ընթերցանություն, Т-աձև աղյուսակ, հինգրոպեանոց շարադրանք, <<Կերպարների ցանց>> մեթոդական հնար:

Կահավորում՝ դասագիրք, գրատախտակ, Հրանտ Մաթևոսյանի դիմանկարը և <<Մեր վազքը>> ժողովածուն, կպչուն թղթեր, գունավոր գրիչներ, տետր-բառարան:

Հարկ եմ համարում նշել, որ խմբերը ձևավորել ենք նախորդ դասաժամին՝ կատարելով աշխատանքի բաժանում՝

1. պատմող աշակերտ,
2. ընտրովի հատվածը ընթերցող,
3. վերլուծող, մեկնաբանող,
4. նկարազարդող կամ բառային աշխատանքը ներկայացնող:

Քանի որ պատմվածքը բաղկացած է չորս հատվածից, յուրաքանչյուր խմբի հանձնարարվել էր աշխատել մեկ հատվածի վրա:

Դասի ընթացքը

1. Խթանում

Քայլ 1. Աշակերտներին ուղղել հետևյալ հարցերը՝

- Ինչպիսի՞ բառ է <<հացը>>՝ ըստ իմաստի:
- Պատմվածքում <<հաց>> բառը ո՞ր իմաստներով է գործածված:
- Ինչո՞ւ է հեղինակը պատմվածքը վերնագրել <<Հացը>>:
- Ո՞վ է հեղինակը, ո՞վ է պատմում դեպքերը:
- Ո՞վ է պատմվածքի գլխավոր հերոսը:

2. Իմաստի ընկալում

Քայլ 1. Կիրառել **<<Ընտրովի ընթերցանություն>>** մեթոդը:

Աշխատանքը ներկայացվում է հատված առ հատված:

Յուրաքանչյուր խմբի Ընթերցող աշակերտը կարդում է խմբին հանձնարարված հատվածի այն նախադասությունը կամ նախադասությունները, որ բնութագրում են տղային և դրանցից ելնելով՝ փորձում բնութագրել տղային մեկ բառով կամ բառակապակցությամբ:

Քայլ 2. Կիրառել **<<Կերպարների ցանց>>** մեթոդական հնարը:



Քայլ 3. Կիրառել **<<Т-աձև աղյուսակ>>** մեթոդը:
Խմբերի բառային աշխատանքը ներկայացնող աշակերտները լրացնում են Т-աձև աղյուսակը:

Տղայի բնութագիրը	
Դրական հատկանիշ	**Բացասական հատկանիշ**
գրքասեր գրագետ խելացի ամաչկոտ իր սխալը գիտակցող զղջացող	ալարկոտ ծույլ անբան գլուխ պահող եսապաշտ ինքնահավան վախկոտ փափկասուն

Քայլ 4. Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իրեն հանձնարարված հատվածին համապատասխան նկարազարդումը՝ հետևյալ թեմաներով.

- <<Ինքնախոստովանություն>>
- <<Աշնանային բնանկար>>
- <<Գյուղական կյանք>>
- <<Ընթրիքի սեղան>>

3. Կշռադատում

Քայլ 1.

- Յուրաքանչյուր խմբի Վերլուծող աշակերտը ներկայացնում է խմբի կարծիքը տղայի մասին՝ ըստ հատվածի:
- Յուրաքանչյուր խումբ վերնագրում է համապատասխան հատվածը, նաև պատմվածքի համար առաջարկում է նոր վերնագիր՝ փորձելով հիմնավորել:

Քայլ 2. Կատարել բառային աշխատանք.

ա/ կազմել հոմանշային շարք՝ օգտագործելով աղյուսակում գրված բառերը,
բ/ գրել դրանց հականիշները:

Անդրադարձ

Քայլ 1. Իրականացնել զրույց.

- Ի՞նչ հասկացանք, ի՞նչ դասեր քաղեցինք պատմվածքից:

Քայլ 2. Ներկայացնել պատմվածքի ժանրային առանձնահատկությունները՝ ըստ Ստ. Զորյանի <<Պապն ու թոռը>> ու Հ. Մաթևոսյանի <<Հացը >> պատմվածքների:

Քայլ 3. Դասը ամփոփել՝ քննարկելով հետևյալ միտքը.
Օրն ավարտվեց. ընթրիքի ժամն է. Լուսամփոփը շոյիչ կաթնալույս է մաղում, իսկ մենք թերթեցինք գյուղական առօրյայի մաթևոսյանական էջը այն վառ հույսով, որ <<Հացը>> պատմվածքի փոքրիկ հերոսը կյանքում ճիշտ է ապրելու, քանզի նա այդ երեկո մայրիկի դրած ընթրիքի սեղանից չօգտվեց, մտավ փափուկ անկողին և ափսոսանքի ցավ զգաց, քնեց իր անարժանության գիտակցության տառապանքով…

Գնահատում

Աշխատանքի արդյունքների գնահատում՝ նախօրոք մշակված չափորոշչով:

№	Չափորոշիչներ	Միավորը
1.	ներկայացրած աշխատանքի համապատասխանությունը առաջադրանքին	
2.	գրագետ գրավոր խոսք	
3.	գրագետ բանավոր խոսք	
4.	խմբային աշխատանքի հմտություն	
5.	Ընդամենը	

Տնային հանձնարարություն

1. Գրել շարադրություն՝ <<Մի դեպք իմ կյանքից >> կամ <<Եթե ես լինեի տղայի փոխարեն>>:

Այս պատմվածքի ուսուցման ընթացքում կատարվել է նաև բառային աշխատանք: Աշակերտները դրսևորել են հոմանիշների, հականիշների և բառի բազմիմաստության վերաբերյալ իրենց գիտելիքները:

1.4 Գրավոր աշխատանք

Գրավոր աշխատանքների միջոցով կարելի է սովորողների մեջ ուսումնական ակտիվություն, ինքնուրույնություն և սեփական աշխատանքի որակի նկատմամբ պատասխանատվություն զարգացնել:

Տարբեր առարկաների ուսումնասիրման ժամանակ կիրառվում են գրավոր աշխատանքների տարբեր տեսակներ, ինչպես օրինակ՝ արտագրությունը, թելադրությունը, փոխադրությունը, շարադրությունը, էսսեն, թեստը և այլն, սակայն պետք է հստակ համոզվել, որ դրանց բոլորի հիմքում դրված են տվյալ առարկայի չափելի վերջնարդյունքները:

Ինչպես գիտենք, գրավոր աշխատանքները կիրառվում են և՛ ձևավորող, և միավորային գնահատման նպատակով: Դիտարկենք գրավոր աշխատանքի տեսակներից մեկի՝ թելադրության իրականացումը ձևավորող գնահատման տեսանկյունից:

Սովորաբար թելադրությունը գրելուց հետո հիմնական անելիքը ուսուցչինն է. նա նկատում է սխալները, բացթողումներն ու ջնջումները, կարմիր գրիչով ուղղում է դրանք: Ավելին, աշխատանքից հետո դուրս է բերում սխալները ճիշտ տարբերակով և որոշում է՝ ինչ անի սովորողը՝ գրելով հստակ հրահանգ: Սովորողին մնում է հետևելով ուսուցչի նշումներին՝ գտնել իր սխալները (ինչը նա սովորաբար չի անում) և կատարել սխալների ուղղում՝ ուսուցչի տված օրինակով (ինչը սովորաբար արվում է մեխանիկորեն՝ որպես արտագրութուն: Այդ են վկայում անգամ սխալների ուղղման ժամանակ սովորողի թույլ տված սխալները):

Թելադրության միևնույն տեքստի վրա կարելի է ձեռնարկել որոշակի քայլեր՝ երեխային աստիճանաբար ակտիվ սովորող դարձնելու համար: Այս դեպքում ուսուցիչը

աշխատանքում նշումներ չի կատարում (վայելչագրական կանոններն այս անգամ նպատակ չեն, դրանք նշվում են հիշեցման համար):

Կանաչ գույնի գրիչով դուրս են բերվում սովորողի թույլ տված սխալների, վրիպակների ու ջնջումների ճիշտ տարբերակները, և տրվում է առաջադրանք՝ դրանք ինքնուրույն գտնելու տեքստում և ուղղելու:

Առաջադրանքը կատարելու համար սովորողը «ստիպված է լինելու» առնվազն մի քանի անգամ կարդալու տրված օրինակները, դրանք գտնելու տեքստում և ինքնուրույն ուղղելու, ինչը ոչ թե մեխանիկական, այլ ակտիվ մտածական աշխատանք է (համեմատում տվյալ դեպքում): Այս դեպքում ուսուցչի և սովորողի գործողությունները հավասարակշռվում են:

Կարելի է աստիճանաբար զարգացնել գործողությունները և ապահովել աշխատելու ավելի մեծ ինքնուրույնություն: Ուսուցիչը նախ՝ մատնանշում է սովորողի ձեռքբերումները՝ կանաչ գրիչով ընդծելով կոնկրետ այն բառերը, որոնց ուղղագրությունը յուրացրել է սովորողը: Այնուհետև գրաֆիկական մատիտով նշում է այն բառերը, որոնց ուղղագրությունը սովորողը դեռ չգիտի, ավելին, ուղղորդում է՝ որտեղից կարող է գտնել և սովորել (օրինակ՝ բառարանից): Այս դեպքում սովորողը բավականաչափ անելիք ունի. սովորելու իրական գործընթացը տեղի է ունենում հենց սեփական աշխատանքի օրինակի վրա:

Գրավոր աշխատանքի նույն տեսակի, ավելին, թելադրության նույն տեքստի վրա կարելի է իրականացնել նոր աշխատանքներ՝ հավատարիմ մնալով ձևավորող գնահատման նպատակին՝ բարելավել ուսուցումը և սովորողի ուսումնառությունը: Ուսուցիչն ավելի ակտիվ դեր է հատկացնում սովորողին, որն արդեն ոչ միայն ինքնուրույն կողմնորոշվում, այլև ինքնուրույն բարելավում է սեփական աշխատանքը՝ առաջնորդվելով ուսուցչի պայմանական նշաններով:

Աշխատանքի կազմակերպման այս մոտեցումը կիրառելի է դպրոցի բոլոր աստիճաններում՝ հատկապես 5-րդ դասարանում «ուղղագրություն» թեման ուսումնասիրելիս և բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունները:

Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

1.5 Հետադարձ կապ

Հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի:

Հետադարձ կապ ապահովելիս ուսուցիչը պետք է սվորողին ուղղի քաջալերող խոսք, հուշումներ, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն նրան հասկանալ իր ուժեղ կողմերը, բացահայտել բացթողումները և բարելավել ուսումնառության արդյունքը: Հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակին ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Ստորև՝ Հավելված 2-ում կներկայացնենք մայրենի դասի մեկ օրինակ, որտեղ հետադարձ կապ ապահովելիս կիրառվել են զանազան միջոցներ և հնարներ:

Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ **արտաքին** և **ներքին:**

Արտաքին հետադարձ կապն ապահովում է

- ուսուցիչ - սովորող,

- սովորող - ուսուցիչ
- սովորող - սովորող

Ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրա կանացնում են համապատասխան վերլուծություններ՝ փոխադարձաբար անդրադառ նալով աշխատանքում եղած ձեռքբերումներին և թերություններին**:**

Ներքին հետադարձ կապն ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկա տմամբ կատարած ինքնաանդրադարձն է: Ե՛վ ուսուցիչը, և՛ սովորողը կարիք ունեն ինքնաանդրադարձ վերլուծության: Ուսուցիչը ստացված արդյունքները վերլուծելով՝ բացահայտում է իր գործողությունների ստացված և չստացված պահերը, դրանց հիման վրա պլանավորում հետագա գործողությունները, իսկ աշակերտը իր գործողությունները վերլուծելով՝ բարելավում է իր ուսումնառությունը:

Հետադարձ կապի իրականացման միջոցները

Բանավոր զրույց

Վերլուծությունները և շտկումները կատարվում են բանավոր քննարկման միջո ցով: Տարբեր հարցերի վերհանման միջոցով բանավոր քննարկվում են այն գործողությունները, որոնք բարելավման կարիք ունեն, ինչու չէ, նաև հնարավոր է նորից ընկերների կամ ուսուցչի օգնությամբ անդրադառնալ այն կետերին, որոնք կօգնեն վերացնել աշխատանքի թերությունները:

Գրավոր մեկնաբանություն.

Բարելավման առաջարկներն իրականացվում են գրավոր կերպով:

Գծապատկերներ.

Ուսուցիչը հետադարձ կապը տալիս է գծապատկերների միջոցով:
Այս միջոցը բարձրացնում է տեղեկատվության յուրացման արդյունավետությունը, քանի որ ուսուցչի՝ սովորողին կամ սովորողներին ուղղված խոսքը ուղեկցվում է նշաններով և գծանկարներով, որոնք կարող են լինել նախապես պայմանավորված նշաններ, սիմվոլներ, հուշող պատկերներ և այլն:

*Տեսագրություն և ձայնային հաղորդագրություն***.**

Որակյալ տեսագրությամբ կամ ձայնագրությամբ կարճ և դիպուկ վերլուծություն կամ մեկնաբանություն է տրվում աշխատանքին:
Արդյունավետ հետադարձ կապ ապահովելու համար անհարժեշտ է պահպանել հետևյալ **սկզբունքները:**

*Անհատական***.**

Սովորողը հասկանում է, որ ուղղորդող և շտկող հարցերն ուղղված են հենց իրեն, այլ ոչ ամբողջ դասարանին: Սովորողը հասկանում է, որ հարցադրումները և ուղղորդումը չեն կրում ձևական բնույթ, այլ իրականացվում են հենց իր համար:

Օբյեկտիվ և նրբանկատ.

Հետադարձ կապի միջոցով պետք է մանրամասն նկարագրել սովորողի գործողությ ունները և բացառել հուզական գնահատականը նրա կատարած քայլերին: Սովորողի համար բավականին տհաճ է և տեղին չէ, երբ իրեն քննադատում կամ պարսավում են այս կամ այն սխալի համար: Բայց եթե նրա նկատմամբ օբյեկտիվ են, այսինքն՝ վերլուծում են

իր աշխատանքը, այլ ոչ թե իրեն՝ մեղադրում կամ հեգնում, նա դրական և պատրաստակամ է մոտենում վերլուծական աշխատանքին:

Պատճառներ և բացատրություն.

Սովորողի կատարած քայլերի վերլուծությունը (ոչ թե ուղղումը), թույլ է տալիս նրան ինքնուրույն հասկանալ և շտկել իր կատարած բացթողումն երը: Հետադարձ կապն ամբողջովին կրում է ուսուցանող բնույթ, ուստի կարևոր է ոչ թե ուղիղ ձևով սովորողին իր սխալները ցույց տալը, այլ հարցերի և պարզաբանումների միջոցով նրան օգնելը, որ դրանք ինքնուրույն գտնի:

Ճիշտ տեղին և ժամանակին.

Հետադարձ կապը պետք է տալ այն ժամանակ, երբ հարցերի ճշգրտումը տեղին է և ժամանակին: Այս սկզբունքի իմաստը հետադարձ կապի ժամանակավրեպ չլինելու մասին է: Ուսուցիչը պետք է հնարավորություն տա սովորողին ժամանակին իր սխալները գտնելու և շտկելու, քանի դեռ նա ամբողջովին գործընթացի մեջ կենտրոնացած է: Ինչպես ասում են՝ երկաթը տաք-տաք են ծեծում:

Մոտիվացիայի ապահովում.

Հետադարձ կապի մեջ պետք է շեշտադրել սովորողի ձեռքբերումները՝ դրանով ապահովելով նրա դրական տրամադրվածությունը և կենտրոնացվածությունը աշխատանքի վերլուծության վրա:

Կարճ և հետաքրքիր.

Յուրաքանչյուր սխալի համար տրամադրել կարճ տեղեկություն՝ համեմելով խաղա յին կամ այլ հետաքրքիր տարրերով:

«Արդյունավետ հետադարձ կապն ավելի կարևոր է, քան ուսուցումը» (Բիլ Գեյթս):

Հավելված 1

Խոսքի բովանդակությունը	Խոսքը չի համապատասխանում թեմային, արտահայտած մտքերը անհասկանալի են:	Խոսքը կառուցված է թեմայի շուրջ, մտքերը համակարգված չեն, բառապաշարը մասամբ է համապատասխանում թեմային:	Խոսքը համապատասխանում է թեմային, ձևակերպում է ինքնուրույն մտքեր, կիրառում է համապատասխան բառապաշար:	Խոսքը համապատասխանում է թեմային, պարունակում է պատճառահետևանքային կապեր և լրացուցիչ տեղեկատվություն:	Խոսքը համապատասխանում է թեմային, կառուցված է վերլուծությունների և պարզաբանող օրինակների վրա:
Խոսքի կառուցվածքը	Մտքերը կապակցված չեն՝ թռչում է մտքից միտք:	Ասելիքը ներկայացնում է հատվածաբար, առկա են լեզվական սխալներ:	Խոսքը ամբողջական է, գրքային ձևակերպումներով, չկան լեզվական սխալներ:	Խոսքը, գրագետ է, մտքերը ձևակերպում է ինքնուրույն, հակիրճ կամ ընդարձակ:	Խոսքը կուռ է, տրամաբանված, գրագետ, ներկայացնում է պահանջված տարբերակով (ընդարձակ, համառոտ, հարազատ մնալով տեքստին, այլ):
Արտահայտման ձևը	Մտքերն արտահայտում է անվստահ, երկմտելով:	Խոսքը ձգձգված է, կրկնություններով, առկա են անհարկի դադարներ:	Խոսքը սահուն է, առկա են տրամաբանական դադարներ:	Մտքերը հաղորդում է կազմակերպված և արտահայտիչ:	Մտքերն արտահայտում է վստահ, համոզիչ՝ ներկայացնելով սեփական տեսակետը, ապահովելով կապը լսարանի հետ:

Հավելված 2

Դասի թեման՝ «Ոսկի արտ» հեքիաթի կերպարների բնութագիրը: Նախադասություն:

Դասի նպատակը՝

- **Նպաստել** զարգացնելու սովորողների ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու, հերոսներին բնութագրելու կարողություններ՝ հարստացնելով բառապաշարը տարբեր տեսակի նախադասությունների կիրառմամբ:
- Սովորողի մեջ **ձևավորել** տեքստի ուսումնասիրման, մտքերը տարբեր նախադասություններով արտահայտելու և հիմնականն ու երկրորդականը միմյանցից առանձնացնելու կարողություններ:
- **Նպաստել** զարգացնելու հեքիաթի հերոսներին ըստ նրանց արարքների բնութագրելու կարողություններ:

Դասի վերջնարդյունքները՝

- Բնագիրը վարժ, անսխալ ու արտահայտիչ **կարդալ:**
- Հեքիաթի բովանդակությունը **վերարտադրել** ստեղծագործաբար:
- **Վերարտադրել** ընթերցած հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները:
- **Նկարագրել** և **ներկայացնել** հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները:
- **Ձևավորել** ստեղծագործելու, կանխատեսելու կարողություններ:
- **Դաստիարակել** ագահությունից, աչքաճակությունից, ստախոսությունից զերծ մնալու, ճշմարտախոս, ազնիվ, բարի, մարդասեր լինելու հատկանիշներ:
- **Կազմել** կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութը (նախադասություն):

Ուսումնական նյութեր՝ «Ոսկի արտ» հեքիաթը, կերպարի բնութագրման գծակարգեր, հեքիաթի փաստերը լուսաբանող թերթիկներ:

Ուսուցման մեթոդներ՝ «Մտագրոհ», «Խթանող հարցեր» «Բազմանիստ», «Ուղղորդված ընթերցանություն», «Կանխատեսման ուղեցույց»:

Դասի տևողությունը՝ 45 րոպե:

Դասի ընթացքը

Տնային առաջադրանքների ստուգում ենք իրականացնում: Դասի այս փուլում դրական արդյունքների հասնելու համար պետք է կարողանանք ծավալել այնպիսի գործողություն, որը հնարավորություն կընձեռի բարձրացնելու դասի նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը՝ համակարգված հնարքների կիրառման միջոցով հնարավորինս արագ ստուգելու դասարանի բոլոր աշակերտների տնային աշխատանքները: Սա ենթադրում է, որ ուսուցիչը հնարավորություն կստանա կարճ ժամանակահատվածում (5-7 րոպե) բացահայտել աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիճանը և ընդհանուր բացթողումները, տնային առաջադրանքի ստուգման ընթացքում հիմնական հասկացությունների արդիականացման և կարգավորման հնարավորությունը, կվերացնի բացահայտված թերությունների պատճառները:

Տնային աշխատանքները ստուգելուց և բացթողումները շտկելուց հետո որոշ աշակերտների գնահատում ենք (ուսուցանող գահատում) և անցում կատարում դասի հաջորդ փուլին:

«Խթանող հարցերի» միջոցով ամփոփում ենք նախորդ դասը, դարձյալ գնահատում՝ հիմնավորելով գնահատականը (բնութագրական):

Տնային հանձնարարությունների ստուգումից և հին դասի կարճ հարցումից հետո անցնում ենք նոր նյութի ուսուցմանը:

Նոր թեմայի ուսուցումը կազմակերպում ենք **ԽԻԿ** համակարգով:

ԽԻԿ-ը ժամանակակից ուսուցման մեթոդների համակարգ է, որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի՝

Խթանում

Իմաստի ընկալում

Կշռադատում:

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքը՝ ԽԻԿ-ը նաև ենթադրում է մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար:

Խթանման փուլում պետք է հիմնվել աշակերտների նախկին փորձառության և գիտելիքների վրա, հետաքրքություն առաջացնել թեմայի վերաբերյալ. որոշ դեպքերում ավելի արդյունավետ կլինի այն անցկացնել խաղերի միջոցով:

Պետք է իմանալ, որ **խթանման** փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով՝ ակտիվացնել, աշակերտների մեջ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Դասի նախնական փուլը սկսում ենք **մտագրոհով**: «Հարևան» հիմնաբառով կազմակերպում ենք մտագրոհ:

«Հարևան» բառի վերաբերյալ աշակերտներն արտահայտում են իրենց պատկերացումները, և ուսուցիչն անմիջապես գրատախտակի վրա գրանցում է նրանց արտահայտած բոլոր մտքերը:

Գծակարգը կլինի մոտավորապես այսպիսին.



Այնուհետև սովորողներին հանձնարարվում է մտագրոհի հետևանքով առաջացած **կապերով (**բառերով) և **«հարևան»** բառով կազմել մեկ նախադասություն՝ բնութագրելով հերոսին: Կարելի է սահմանումը ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր շարադրանքով: Ապա աշակերտները կամ խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է հերոսին բնաթագրող իր տարբերակը: Այս մոտեցումը նպաստավոր պայ-

մաններ է ստեղծում նոր մտքերի և տեսակետների ձևավորման համար, ինչպես նաև ընդհանուր ուժերով ձեռք բերված գիտելիքը հիշողության մեջ դրոշմվելու ավելի մեծ հավանականություն կա:

Խթանումից հետո անցնում ենք **իմաստի ընկալման** փուլին՝ կիրառելով «Ուղղորդված ընթերցանություն» մեթոդը:

Դասանյութը բաժանում ենք երեք իմաստային դադարների և կարդում ենք առաջին մասը (կամ սովորողներն են կարդում), երբ ավարտում ենք, առաջին դադարից հետո հարց ենք տալիս սովորողներին՝ «Ձեր կարծիքով ի՞նչ է լինելու հետո»: Աշակերտներն իրենց կանխատեսումներն են անում հետագա գործողությունների ընթացքը կանխատեսելու ուղղությամբ, սակայն յուրաքանչյուրի կանխատեսումից հետո կրկին հարց ենք տալիս. «Ինչո՞ւ եք այդպես կարծում»՝ ապահովելով թեմայի պատճառահետևանքային կապերը: Բոլորն իրենց կարծիքներն արտահայտում են՝ ապահովելով մոտիվացիան:

Գծակարգով աշխատելիս կարելի է ուսուցումը կազմակերպել անհատական կամ խմբային աշխատանքով, որն ավելի է ամրապնդում յուրացումը:

Ապա անցնում ենք դասի երկրորդ մասի ընթերցմանը, որ աշակերները հասկանան՝ ինչ եղավ հետո, և համեմատեն իրենց կանխագուշակման հետ՝ արդյոք ճիշտ էին գուշակել գործողությունների հետագա ընթացքը:

Հատվածը ընթերցելուց հետո երրորդ կանգառն ենք անում՝ կրկին նույն հարցերն առաջադրելով՝ պարզելու համար սովորողների կանխատեսելու, տրամաբանելու կարողությունները: Սա նպաստում է աշակերտների կանխատեսումների զարգացմանը: Ենթադրություններ անելով՝ ձևավորվում և զարգանում է սովորողի բանավոր խոսքը, զարգանում է քննադատական մտածողությունը, կարողանում է դիրքորոշում դրսևորել, սեփական կարծիք արտահայտել:

Կարող ենք սովորողներին հանձնարարել յուրաքանչյուր կանգառից հետո լրացնել «Կանխատեսման ուղեցույցի» գծակարգը:

Կանխատեսման ուղեցույց

1. Ի՞նչ է լինելու հետո: ա) բ) գ)	**2. Ինչո՞ւ եմ այդպես կարծում:** ա) բ) գ)
3. Ի՞նչ եղավ: ա) բ) գ)	**4. Նոր ավա՛րտ հորինիր և վերնագրի՛ր:**

Ընթերցումն ավարտելուց հետո կազմակերպում ենք քննարկում և մտքերի փոխանակություն:

Այնուհետև անցնում ենք **կշռադատման** փուլին:

Դասարանը բաժանում ենք խմբերի՝ հանձնարարելով կատարել հետևյալ առաջադրանքը. Երկսյուն աղյուսակում տեքստից դուրս գրել ժողովրդախոսակցական ոճին հատուկ նախադասությունները՝ գրելով դրանց համարժեք գրականը:

Ժողովրդախոսակցական նախադասություն	**Գրական հայերեն նախադասություն**

Եզրակացություն

Գնահատումը ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է: Ձևավորող գնահատման նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար: Դասի հիմքը ուսուցման նպատակն է . և' ուսուցչի, և' սովորողի գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Ձևավորող գնահատման նորարարական մեթոդները օգնում են պահպանել հետաքրքրությունը կրթական և ճանաչողական գործունեության և դրա արդյունքների նկատմամբ, զարգացնել սովորողների նախաձեռնությունը ու ինքնուրույնությունը, կոլեկտիվ և խմբային գործունեության հմտությունները, սովորողների միջև կառուցողական հարաբերությունները:

Ուսուցիչն ուսումնական գործընթացում պետք է կարևորի ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումը, այլ տարբեր միջոցներով և հնարներով բացահատել սովորողների հմտություններն ու կարողունակությունները, զարգացնել սովորողի մտածողությունը, դարձնել նրան դասի ակտիվ մասնակից, հնարավորություն տալ սովորողին անկաշկանդ, ստեղծագործաբար մտածել և վերլուծել, համատեղել անհամատեղելին, նոր գաղափարներ առաջ քաշել և հավատալ սեփական ուժերին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան «Մայրենի 6» , 2012 «Էդիթ Պրինտ» հրատակչություն
2. Ա. Գալստյան, Թ. Թովմասյան «Մայրենի 5», 2023 «Էդիթ Պրինտ» հրատակչություն
3. Ս. Խաչատրյան «Ուսուցման արդյունավետ հնարներ», https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
4. «ԿԶՆԱԿ» հիմնադրամ, https://kznakhimnadram.blogspot.com
5. ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՆՈՐ ՀՊՉ), https://lib.armedu.am/article/1140